

Հանդիպում՝ Պրն. Զօհրապ Ծամմասեանի հետ

Վերջերս հիւրաբար քաղաքս կը գտնուէր Համաշխարհային Մելգոնեան Սանուց Միութեան համադրող՝ Պրն. Զօհրապ Ծամմասեան, որուն հետ ընկերական մտերմիկ հանդիպում մը ունեցաւ Մոնթրէալի Մելգոնեան Սանուց Միութիւնը: Սոյն հանդիպման ընթացքին, Պրն. Ծամմասեան ընդարձակօրէն վերլուծեց եւ մանրամասն տեղեկութիւններ փոխանցեց Մելգոնեանի շուրջ ծաւալուող նոր զարգացումներուն մասին, վստահեցնելով որ Մելգոնեանի վերաբացման ուղղութեամբ տարուող աշխատանքները դրական ընթացքի մէջ են: Ան անդրադարձաւ իր իսկ նախաձեռնութեամբ անցնող Փետրուարին ժընեւի մէջ խումբ մը մելգոնեանցիներու եւ հայ դպրոցի ճակատագրով մտահոգ Երուսալի խումբ մը հայ գործարարներու միջեւ տեղի ունեցող խորհրդակցական հանդիպումին, որ շատ անմիջական, օգտաշատ եւ հեռանկարային էր, որմէ ծնունդ առաւ Համաշխարհային Մելգոնեան Սանուց Միութիւնը: Ի միջի այլոց, այս մասին ատենին հաղորդագրութեամբ մը աշխարհասփիւռ բոլոր Մելգոնեան Սանուց Միութիւնները տեղեակ պահուած էին: Պրն. Ծամմասեան յատուկ կերպով մատնանշեց, որ բոլոր մելգոնեանցիները միշտ երախտապարտ եղած են Հ.Բ.Ը.Միութեան, քանի որ անոր դերն ու նպաստը մեր ժողովուրդի կրթամշակութային եւ ընկերահասարակական բնագաւառներուն մէջ անգնահատելի է, աւելցնելով որ այսօր, աւելի քան երբեք, Բարեգործականը պէտք է ամուր մնայ իր պատնէշին վրայ, որուն հիմնական առաքելութիւններէն մին դպրոցաշինութիւնն է: Այս առնչութեամբ, ան բացայայտօրէն ըսաւ որ Համաշխարհային Մելգոնեան Սանուց Միութիւնը բազմիցս կոչ ըրած է Հ.Բ.Ը.Միութեան Կեդրոնական Վարչութեան որ վերատեսութեան ենթարկէ Մելգոնեանը փակելու իր որոշումը, եւ Սանուց Միութեան հետ գործակցաբար միասնական ուժերով վերաբանայ Մելգոնեան Կրթական Հաստատութիւնը, որուն կատարած դերը սփիւռքի մէջ, անկասկած, անփոխարինելի է: Իհարկէ, սոյն հանդիպման ընթացքին եղան բազմաթիւ հարցադրումներ, ինչպէս նաեւ խօսուեցաւ յառաջիկային առնուելիք որոշ գործնական քայլերու մասին:

Իր կեցութեան ընթացքին, Պրն. Ծամմասեան հանդիպում մը ունեցաւ նաեւ մելգոնեանցի տաղանդաշատ գրող, Պրն. Հայկ Նագգաշեանին հետ, եւ իր ջերմ գնահատանքը յայտնեց անոր Մելգոնեանի փակման առնչութեամբ հայկական զանազան թերթերու մէջ իր արդար ձայնը բարձրացնելուն՝ յօգուտ Մելգոնեանի անվերապահելի դերին ու պահպանման:

Աւետիս Սալիզեան

Zohrab Shamassian visited Montreal, Canada on August 28, 2009



Left to right: Haig Naccashian, Zohrab Shamassian and Avedis Salizian



Krikor Marounian, Hagop Aktorossian (chairman), Zohrab Shamassian, Vahan Naccashian, Avedis Salizian, Nigoghos Maarounian (left to right)